

ԻՄ ՄԱՆԸ

ԳԵՆՆԵՆԿ այն օրերէն մին աշնամ,
Որ մարդ չսպարիլը այլ կ'երգաւ սարարում,
Երբ երկրմբի լոյսն ու կապոյտը իջնան
Ծաղիկներու զիրկն ու կանաչ դաշտերում .

Անձանօթի ու անհունի խորհրդով
Երբ հեռատր թաքում իրերն երեսան
Միջոցին մէջ ձրգուած անշարժ ամվրդով
Թափանցկութեամ մէջէն ցօյին առտււան .

Ու ծաղիկներն զեղում բոլորով ու կեանքով,
Արեւծագին լոյս-ժըպտին տակ՝ ամօթլեած
Կախտիմ խոնաւ դաշտերու մէջ, աղբրոց քով
Եւ կամ եզերքն ուղիներում ըստուեկած .

Վերջն, իրկուամ դէմ՝ հովտին ծայրը հեռուն,
Երբ զանգակներն եկեղեցոյ մը զեղչուկ,
Հոգեզմայտը ելեւէջով մը թրթռում,
Ներդաշնակին իրենց նրկաց յեղեղով .

Եւ հոսկ բնութիւնն ի միրհ՝ լուէ անշրտունջ,
Լըութիւն, այդ տիգզերքի՞ մեղեղին,
Հոգեմերու և իրերու այդ մըրմուճջ,
Որ հընչէ խուլ՝ ներքեւ երկմից գմբեթին . . .

Ա՜հ, միրհէի եւ քունով մը վըսեմ,
Ցախտեմից անդորրութեամ մէջ անեզր,
Քունով մը որ չարթըմնար և առտուան դէմ
Ձուսի տըխտը մըղձաւամջի երազներ,

Այլ երգն այն օրումն՝ որ լոյս էր բոլոր,
Որ հեշտ էր իմչպէս թարմ ծաղիկ մը հաստոյր,
Եւ լիութիւնն ունէր կեանքի մը աղուր,
Որմէ վերջ զայ գիտակցութիւնը տըխտը .

Ո՛հ, այն ատեն շիրմիս վըրան ըսպիտակ
Սըփռեցէք միշտ թարմ ծաղիկներ կենսայեց,
Որ բոլորշեմ ամմեղին կոյս-ժըպտին տակ,
Ու թառամին յետոյ ցուքին մէջ աստեղ :

Եւ հոն այդ ցուքն ու ծաղիկներ հեշտարդր
Ըլլան զերդ օրագ ու սեւ ուլուք ասպակեայ .
Հեռու շիրմէս յուսահատին մայրածք կոյր
Եւ ձրմետում ցուրտ շոշախումը դըժմեայ :

ԶԱՐՄԱՅՐ ՄՍԵՐԵԱՆՑ

ԱՆՏԵԱԼ 1899 թ. Մայիսի 12ին՝
երկարատեւ և ծանր Հիւանդութենից յետոյ,
Մոսկոյում վախճանեցաւ տեղւոյ Հայ հա-
սարակութեան ականաւոր անդամներից Ալէի՝
Զարմայր Մսերեանց : Հանգուցեալը՝ աս-
տուածարան Մոսկոյ մագիստրոսի որդին էր,
և ծնաւ 1836 թ. Բեսսարաբիոյ Հնչեշտ



Զարմայր Մսերեանց .

աւանում, որ նորա ծնողը ուսուցչութեամբ
էր պարագում : 1848 թ. Լազարեան ճե-
մարանում կրօնի ուսուցիչ սորազան Սալ-
լանիճեանը, իւր ծերութեան պատճառաւ չկա-
րողանալով շարունակել իւր պաշտօնը, հար-
կաղբոց ձեւարանի պ. Հոգաբարձու Լազա-
րեանին, մի այլ կրօնատուոյց որոնել հայ
հոգեւորականների մէջ, որ այնքան էլ զի-
րին գործ չէր . վերջապէս, ընտրութիւնն ըն-
կաւ Մոսկոյ օտարակազ Մսերեանցի վրայ,
որին անձամբ էր ճանաչում Բեսսարաբիոյ
թեմական առաջնորդ հոշակաւոր Ներսէս

Աշտարակցին . իսկ սորա սերտ յարաբերու-
թիւնները ու նամակագրութիւնները Լազա-
րեանց տոհմի հետ՝ արդէն յայտնի են* :
Յիշեալ թուականին Մսերեանց գերդաստանը
Հնչեղտից տեղափոխուեցաւ Մոսկուա : Այս-
տեղ Մսերեանց — հայրը մտաւ Լազարեան
ճեմարանի իրեն կրօնի դաստատու , որդին —
փոքրիկ Չարմայրը , իրեն աշակերտ : Չար-
մայրը , իւր ծնողաց միակ զաւակը ու պար-
ժանըը , մեծ յառաջագիմնութիւն ցոյց տալով
ճեմարանում աւանդելի գիտութիւններէ մէջ ,
յաջողութեամբ աւարտեց ուսման դասըն-
թացը 1855 թ . և ամսիջական նոյն տարին
ճեմարանում ստանձնեց նախ՝ վերակացոյժ ,
ապա թուրք լեզուի ուսուցչի պաշտօնը :
1865 թ . նա բոլորովին հեռացաւ Լ . Ճե-
մարանից , նոր պաշտօն ստանալով Մոսկվայի
գեներալ — նահանգապետի դիւանում , ուր
Սեպտեմբեր ամսին հանգուցեցին նշանա-
կուեցաւ կրտսեր տեսուչ մամուլի գործերում :
1880 թուականի Օգոստոսի 5ին Չ . Մսե-
րեանց նշանակուեցաւ տաղ տեսուչ Մամուլի
գործերում (հսկողութիւն տպարանների ,
գրափճառանոցների վրայ , և այլն) : Իբրեւ
ժիր և արթուն պաշտօնեայ , շատ անգամ
ակամայ սխալանքներ նկատելով տպարան-
ների կողմից , հանգուցեալը միաք յղացաւ
նոցա առաջն անել , ոչ թէ անպայման դատի
հրաւիրելով յանցագործներին , այլ առանձին
ձեռնարկներ հրատարակելով , ուր ի մի ամ-
փոփուած են տպագրութեան վերաբերեալ
բոլոր օրէնքները ու հրահանգները : Չ .
Մսերեանցի յիշեալ աշխատութեան խորա-
գիրն է՝ Законъ о Печати (դակօնը օ պե-
չատի == Մամուլի վերաբերեալ օրէնքներ) ,
որ ուրիշ տպագրութիւն ունեցաւ : Այդ հան-
դամանքը մեծ գրաւական է արդէն նորա
զրբէ յաջողութեանը , ինչպէս վիկայում են
մայրաքաղաքիս ռուսաց լրագրիները : Այս
վերջիններս հանգուցեալի յիշատակին նուիրել

են զանազան ներքոյներ , ուր , բաց ի կեն-
սագրական տեղեկութիւններից , ընթերցողը
կը գտնէ նաեւ հետեւեալն . թէ Չ . Մսե-
րեանցը իբրեւ օրինակելի պաշտօնեայ , շատ
խստապահանջ էր իւր վերաբերութեամբ
և ներողամտ՝ դէպ ի իւր ստորագրեալներն .
մայրաքաղաքիս հասարակութեան անխտր
ամեն խաւերում նա վայելում էր կատարեալ
սեր ու յարգանք¹ : Իւր պաշտօնավարութեան
միջոցին , գրում է այդ լրագրիներից մէկն² ,
հանգուցեալը չգիտէր ինչ տակ է հանգիստ
կամ յոգնածութիւն . գիշերուայ ժամի եր-
կուսին և երեքին պատկառելի ծերունին կա-
քով շրջում էր և յաճախում զանազան լրա-
գրիները խմբագրատները , այս կամ այն կա-
ռավարչական հրահանգները մեկնելու ու
պարզաբանելու համար , որպէս զի չլինէ թէ
սխալ բնութանից խմբագիրը օրէնքի զօրու-
թեամբ պատասխանատուութեան ենթարկուի :
Մի ուրիշ լրագրի թղթակիցը³ , ի միջի այ-
լոց գրում է , թէ Մսերեանցը , իբրեւ լուսա-
ւոր և մարդասեր հայեացքների տէր , մեղմ
քնաւորութեամբ մարդ էր . հսկելով մամուլի
գործունէութեանը , նա հետու էր շար ու ցա-
մաք ձեւակերպութիւնից , կասկածատութեամբ
չէր վերաբերում դէպի կղած իրողու-
թիւնը . դորա համար նա սիրելի էր ամե-
նայն տեղ :

Իւր երկարամեայ և ամբիժ պաշտօնավա-
րութեան միջոցին՝ Չ . Մսերեանց ստացել է
բոլոր շքանշանները , մինչև Ս . Աննայի ա-
ռաջին աստիճանը . նաեւ առանձին նշան
վասն 40ամեայ ծառայութեան :

Ռուսաց ծառայութեան պաշտօնեայ լինե-
լով հանդերձ Չ . Մսերեանցը երբէք չէր
մտաւնում , որ ինքն ծագումով հայ էր և իւր
ազատ ժամերը նուիրում էր , ըստ շափու
կարողութեան , հայ գրականութեան և հա-
սարակութեան շահերին : Արդէն երիտասարդ
հասակից Չարմայրը հօր օգնականն էր երբ
նա հրատարակում էր « Ճառքաղ » բանասի-
րական ամսագիրը , 1859-1864 թ . վաթսնա-

* Լազարեան ճեմարանի մատենադարանում
է միջի լրաց պահվում են 152 ձեռագիր ժու-
ղովածու մատենաներ , որոնց մէջ ամփոփուած
են Լազարեան տոհմի գրազրուութիւնները զա-
նազան անձանց և հաստատութեանց հետ : Մ .
Հեղ . :

1. Москов. Видомости.
2. Новості Дня.
3. Русскія Видомости.

կան թուականներին իւր խմբագրութեամբ Չարմայր հրատարակում էր « Համալսարանի Ռուսիայ » թերթը, որի էջերում երիտասարդ Մեծորայ Մմբատեան վարդապետը¹ առաջին անգամ լոյս ընծայեց իւր գտած բեւեռագիր արձանագրութիւններից առաջինը. 70ական թուականներին նա սկսեց հրատարակել « Փարոս » ամսագիրը, որը յետոյ պատկերապարզ գործնելով և դիրքը մեծացնելով շարունակեց մինչեւ 1881 թուականը. իւր ժամանակին նա լոյս ընծայեց Հայոց և թուրք լեզուների դասարարքը, Անձեռագործ պատկերի նկարագրութիւնը սուսերէն լեզուաւ, թարգմանեց մի քանի մանր վկայիկներ մանկական ընթերցանութեան համար, Դարձեալ մենք Չ. Մսերեանցին ենք պարտական « Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի » գեղեցիկ ու ստուար գրքի հրատարակութիւնը, զոր երկասիրել էր նորա ծնող Մսեր սնագիտարուը: Իբրեւ Մոսկովայի հայ հասարակութեան անդամ և Հայաստանեայց Ս. եկեղեցու հարազատ զուակ Չ. Մսերեանցը միշտ մասնակցում էր մեր գործերին մերթ իբրեւ երէցփոխի պաշտօնակատար, մերթ իբրեւ նախագահ եկեղեցական խորհրդարանի, որ վարում է սեղաւոյ եկեղեցական կուլուածների գործը: Վերջին տարիներս նա իսպառ հեռացել էր գործից իւր անձնական տկարութեան պատճառաւ և ամառային արձակուրդներին գնում էր իւր ծննդավայրը Բեստարբախ փոքր ինչ ապաքինելու համար: Նշոյր նա պատրաստվում էր անելու և այժմ, սակայն վերին Նախախնամութիւն այլապէս էր անօրինել, առաջնորդելով նորան զէպ ի անբոյթ նաւահանգիստը: Չարմայր Մսերեանցը կնքեց իւր մահկանացուն 63 տարեկան հասակով, խորին վիշտ թողնելով իւր այրիացեալ ամուսնուն և որդացեալ զուակներին: Մաղթենք յաւիտեանեան իսողողութիւն մեր քրտնաջան հայրենակցի սուրբներին:

Մոսկովա. Յուլիս, 1900 թ.:

Մ. ՇՈՎՐԵՆՆ

¹ Այժմ արքեպիսկոպոս և անդամ Մոսկովայի կաթողիկոսական հնագիտական ընկերութեան: Ման. Հեղ.:

Է Ա Ն Յ Ե Ս Է Ա Ն Յ Ի Ն Ս Ե Ց

ԱՐՏԱՍԱԷՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ԲԱՆԱԼԵՐ. — Պ. Պատմահանի վերջին հանդիսին մէջ (Բ. տարի. Ա. Պրակ) կը գտնենք Հեռեւեալ յօդուածներն: Մ. Ս. Դաւիթ-Բէկ, մի երկար գրութեամբ կ'ուսումնասիրէ « Բաղդատական քերականութեան » ծագումը և օգուտները: Գրութեան համաւտո նախաբանին մէջ կը յիշէ և կերպով մը ազգը կը մեղադրէ որ յնորհիւ աբուելեան յետամնացութեան, կարեւորութիւն տուած չէ բանասիրական, հնախօսական գիտութեան և ուսումնասիրութեանց, որ ունի զանազան օգուտներ, լինի պատմական՝ լինի լիզուարանական տեսակէտով: Եւ ճիշդ է որ Միթթար Աբբայի շնորհիւ, Եւրոպացի գիտնականները հայերէն լեզուն սխառ սորվել և յետոյ ուսումնասիրել մեր պատմութիւնը և լեզուն. և փութանք քննելով՝ որ այդ օտար բանասէրներն թէեւ հայ գրականութեան նոր և մեծ ծաւալութեան մատուցած են, բայց ոմանք անտեղի վրեւիկներու մէջ սայթաքած են, մանաւանդ պատմական տեսակէտով. և այս շատ հաւանական էր, քանի որ օտար բանասէր մը կարելի էր որ մեր ամէն Հին հեղինակաց մասին լիովին հմտութիւն ունենար. թերի լիւնելով անոնց գիտութիւնը՝ թերի եղան նաեւ անոնց ուսումնասիրութիւնը: Եւ այս ճշմարտութիւնը ուզած է մտնել Պ. յօդուածագիրը: — Համամիտ ենք յօդուածագիրն՝ որ ազգի մը բարբառը հմտական կերպով ուսումնասիրելու համար քուական չէ մի քանի դասական լեզուաց՝ յունարէնի, լատինարէնի, արաբարէնի, եբրայարէնի գիտութիւնն, այլ պէտք է անհրաժեշտ և Մասնակիտ լեզուի գիտութիւնն. և բաց աստի,

« Անհրաժեշտ է բաղդատական մեթոդն լուահասկնալ և միանգամ ընդ միշտ ըմբռնել, թէ ինչպէս պէտք եղած ժամանակը սանսրիտանի գիմելով Հնդուարդական կըլուած բարբառներու ուսումնասիրութիւնն՝ իրեն պիտանի լոյսն ու կարգաւորութիւնը կը ստանայ անկէ »:

Պ. յօդուածագիրը իւր ներկայ գրութեամբ խօսած է սանսրիտը հայերէնի, յունարէնի և լատինարէնի Հետ կապող առնչութեանց վրայ: Եւ ըստ Ապիլաթայի Արիական Ընկերութեան սանսրիտի ուսումնասիրութեանց, կ'ընդունի որ դասական լեզուաց ոչ